ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 6
« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-10/1» ԾԱԾԿԱԳՐՈՎ ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան 06-ը փետրվարի 2018թ.
Ժամը 11[00]

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու՝
ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի պետի խորհրդական Կ. Հակոբյան,
գնահատողներ՝
ՀՀ ՊՆ կապիտալ շինարարության և զորքերի բնակավորման վարչության պետի տեղակալ, ՔՀԾ 1-ին դասի խորհրդական Մ. Խալաթյան,
ՀՀ ՊՆ ռազմական ոստիկանության հատուկ օպերատիվ ծառայության սպա, լեյտենանտ Հ. Բաղալյան,
ՀՀ ՊՆ իրավաբանական վարչության իրավական ապահովման բաժնի ավագ սպա, փոխգնդապետ Ա. Մաղաքյան,
Գնումները համակարգող՝
ՀՀ պաշտպանության նախարարության նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի գնումների փաստաթղթերի ձևակերպման վարչության աշխատանքների և ծառայությունների գնման փաստաթղթերի ձևակերպման բաժնի պետ, ՔՀԾ 1-ին դասի խորհրդական Ռ.Մարդոյան:

« ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-10/1» ծածկագրով մրցույթի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Ռ. Մարդոյան)

1. «Մեծ Ծիածան», «Էլջեն» և «Օպտիմում Էներջի» ՍՊԸ-ների կողմից որպես շտկում ներկայացված փաստաթղթերի քննարկման վերաբերյալ:

2. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին.

3.Ներկայացված գնային առաջարկներիի հիման վրա «ՀՀՊՆՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-10/1» ծածկագրով մրցույթի 1-ին և այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.

4. Տեղեկություններ՝ հայտերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին.

5. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

1. «Մեծ Ծիածան», «Էլջեն» և «Օպտիմում Էներջի» ՍՊԸ-ների կողմից որպես շտկում ներկայացված փաստաթղթերի քննարկման վերաբերյալ

(Ռ. Մարդոյան)

1.1 Քննարկելով «Մեծ Ծիածան», «Էլջեն» և «Օպտիմում Էներջի» ՍՊԸ-ների կողմից որպես թիվ 5 արձանագրության 2.3 կետով նախատեսված անհամապատասխանությունների շտկում ներկայացված փաստաթղթերը՝ հանձնաժողովը որոշեց դրանք գնահատել հրավերի պահանջներին համապատասխան:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

2. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գինը և տեղեկատվություն բանակցությունների վարման մասին

(Ռ. Մարդոյան)

2.1 «Գնումների մասին» ՀՀ օրենքի և մրցույթի հրավերի պահանջներին համապատասխանող գնային առաջարկ են ներկայացրել հետևյալ մասնակիցները.

Հ/հ	Ապրանքի անվանում	«Գալտ Գրուպ» ՍՊԸ	«Էլմարկետ» ՍՊԸ	«Էլջեն» ՍՊԸ	«Էներջի Սեյվինգ» ՍՊԸ	«ՄԱԺԷՎ» ՍՊԸ	«Մեծ Ծիածան» ՍՊԸ	«Օպտիմում Էներջի» ՍՊԸ	1-ին տեղ զբաղեցնող մասնակից
		Առանց ԱԱՀ	Առանց ԱԱՀ	Առանց ԱԱՀ	Առանց ԱԱՀ	Առանց ԱԱՀ	Առանց ԱԱՀ	Առանց ԱԱՀ	
1	Տնտեսող լամպեր (Լուսադիոդային լամպ E-27)		69,082,875	49,637,325	58,848,375	57,108,510	38,225,857.5	38,891,100	«Օպտիմում Էներջի» ՍՊԸ
2	Տնտեսող լամպեր (Լուսադիոդային գլանաձև լամպ T8-60սմ)	11,372,000	13,267,333	14,215,000	26,297,750		11,817,403.33	10,166,666.67	«Օպտիմում Էներջի» ՍՊԸ
3	Տնտեսող լամպեր (Լուսադիոդային գլանաձև լամպ T8-120սմ)	25,663,200	30,296,833	34,752,250	74,851,000		30,599,801.67	24,250,000	«Օպտիմում Էներջի» ՍՊԸ
4	Արտաքին լուսավորման լամպեր (Արտաքին լուսավորման լուսադիոդային լուսատու)			136,625,666.67				156,702,000	«Էլջեն» ՍՊԸ

2.2 Մասնակիցների գնային առաջարկների հաշվարկման ճշտությունը /հայտերով ներկայացված գնային առաջարկների թվերով և տառերով արտահայտված տվյալների համապատասխանությունը/, ինչպես նաև հաշվարկման թվաբանական ճշտությունները համապատասխանում են /ճիշտ են/: Ըստ ներկայացված տվյալների՝ բոլոր մասնակիցները ԱԱՀ վճարող են:

2.3 Սույն մրցույթի շրջանակներում գների նվազեցման բանակցություններ չեն վարվել:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

3. Ներկայացված գնային առաջարկներիի հիման վրա «ՀՀՊՆՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-10/1» ծածկագրով մրցույթի մրցույթի 1-ին և այլ տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին.

(Ռ. Մարդոյան)

3.1 Էլեկտրոնային գնահատման արդյունքում «ՀՀՊՆՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-10/1» ծածկագրով մրցույթի հանձնաժողովի որոշմամբ ներկայացված գնային առաջարկների հիման վրա 1-3 չափաբաժինների մասով 1 տեղ զբաղեցնող ճանաչվեց «Օպտիմում Էներջի» ՍՊԸ-ն, իսկ 4-րդ չափաբաժնի մասով՝ «Էլջեն» ՍՊԸ: Մնացած մասնակիցները ճանաչվեցին հաջորդող տեղ զբաղեցնող՝ ըստ ներկայացված գների շահավետության:

3.2 Հանձնաժողովը որոշեց հրապարակել հատուկ նիստի արդյունքները և առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներին առաջարկել ներկայացնելու «ՀՀՊՆՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-10/1» ծածկագրով մրցույթի **հրավերի 2-րդ մասի (հայտը պատրաստելու հրահանգի) 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը**:

3.3 Հանձնաժողովը որոշեց Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում ներկայացնել առաջին տեղ զբաղեցրած մասնակիցների՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների առկայության, ինչպես նաև ընթացակարգի հրավերի ***«Ֆինանսական միջոցներ»*** որակավորման չափանիշին վերաբերող պարբերությամբ նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ: վերաբերյալ:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

4. Տեղեկություններ՝ հայտի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին

(Ռ. Մարդոյան)

4.1 Մասնակիցների կողմից հայտերի վերաբերյալ հարցումներ չեն կատարվել

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

5. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Ռ. Մարդոյան)

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԲՄԱՊՁԲ-10/1» ծածկագրով մրցույթի հաջորդ նիստը հրավիրել 1-ին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից հրավերով նախատեսված փաստաթղթերը հանձնաժողովի կողմից գնահատելու վերջնաժամկետի օրը ժամը 11^{00}-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0:

Գնահատող(ԳԱՊ) Կ. Հակոբյան

Գնահատող Մ. Խալաթյան

Գնահատող Հ. Բաղալյան

Գնահատող Ա. Մաղաքյան

Գնումները համակարգող՝ Ռ. Մարդոյան